



Australian Government
Department of Health

Սահմանափակումների թեթևացում

Ավստրալիան հաջողությամբ <<հարթեցրել է կորը>> և COVID-19 հիվանդության նոր դեպքերի թիվը ամբողջ երկրում շատ ցածր է ներկայումս: Այժմ մենք կարող ենք սկսել զգույշ քայլեր ձեռնարկել՝ թեթևացնելու որոշ սահմանափակումներ, որոնք մեզ օգնել են ճնշել վիրուսի տարածումը:

Միշտ տարբերություններ են եղել, թե ինչպես է COVID-19-ը տարածվել նահանգներում և տարածքներում: Ազգային կառավարությունը համաձայնեցրել է եռափուլ ծրագիր՝ աստիճանաբար վերացնելու հիմնական սահմանափակումները այժմվանից մինչև հուլիս ընկած ժամանակահատվածում, որը սա հաշվի է առնում: Ծրագիրը հիմնված է Ավստրալիայի Առողջության պահպանման գլխավոր հանձնաժողովի փորձագիտական խորհրդատվության վրա:

Ծրագրի համաձայն՝ նահանգները և տարածքները կարող են այս քայլերը ձեռնարկել տարբեր արագությամբ՝ կախված իրենց հանգամանքներից:

Մինչ մենք անցում ենք կատարում ապրելու COVIDSafe Ավստրալիայում, մենք դեռ պետք է պահպանենք ֆիզիկական հեռավորություն և պատշաճ հիգիենա: Առավել, քան երբեք, կարևոր է, որ մարդիկ մնան տանը, եթե վատ են զգում, նույնիսկ, եթե շատ քիչ են վատ զգում:

COVIDSafe ծրագիրը նույնպես կօգնի պահել ընտանիքներին, ընկերներին և համայնքներին COVIDSafe:

Մեր հաջողությունը COVIDSafe մնալու համար, սահմանափակումների թեթևացման հետ մեկտեղ, կախված է մեզնից՝ որպես անհատներ՝ պատասխանատվություն կրելով և այս վարքագիծը դարձնելով մեր առօրյա կյանքի մի մասը: Երբ տնից դուրս եք գալիս, մտածեք, թե ինչպես եք ապահով պահելու ձեզ, ձեր ընտանիքին, ընկերներին և գործընկերներին:

3 փուլային ծրագիրը ավստրալացիներին ավելի հստակություն է տալիս, թե ինչ է սպասվում առաջիկա ամիսներին: Սահմանափակումների հիմնական ոլորտներից յուրաքանչյուրի համար կան երեք կարևոր քայլեր, թե որտեղ ենք մենք այժմ և ուր ենք ցանկանում լինել:

Առաջին քայլերը զգուշավոր են, քանի որ կարևոր է, որ մենք շատ արագ առաջ չշարժվենք և չկորցնենք այն, ինչ ձեռք ենք բերել: Որոշ բիզնեսներ կսկսեն վերաբացվել, երբ մենք սկսենք թույլ տալ, որ մինչև 10 հոգանոց խմբեր հավաքվեն միասին տներում և համայնքում: Այս առաջին քայլերը կօգնեն սկսել վերակառուցելու մեր տնտեսությունը, և մեզ կտան ավելի շատ հնարավորություններ՝ միանալու ընտանիքի և ընկերների հետ դեմ առ դեմ:

Երկրորդ քայլերը կհենվեն սրա վրա՝ ավելի մեծ հավաքույթներով և ավելի շատ բիզնեսների վերաբացվելով: Երբ բիզնեսները քայլեր ձեռնարկեն վստահ լինելու, որ իրենք COVIDSafe են, մենք բոլորս կզգանք մեզ ապահով և վստահ՝ կատարելով որոշ բաներ, որ մենք բաց ենք թողել անցած մի քանի ամիսների ընթացքում: Որոշ մեծ վտանգ ներկայացնող գործողություններ դեռ կշարունակեն սահմանափակված մնալ:

Երրորդ քայլերը սկսում են՝ ամբողջությամբ ընդունելով երկարաժամկետ COVIDSafe ապրելակերպի և աշխատանքի ձևեր: Սա կլինի մեր <<նոր բնականոնը>>, մինչ վիրուսը շարունակում է սպառնալիք մնալ: Սահմանափակումները կնվազեցվեն: Մինչև 100 հոգանոց հավաքույթները, միջնահանգային ճամփորդությունները, համայնքային սպորտի աճը և դեպի Նոր Զելանդիա ճամփորդության հնարավորությունը կամրապնդվեն համընդհանուր COVIDSafe գործառնություններով: Որոշ սահմանափակումներ, ինչպիսիք են միջազգային ճամփորդությունները և զանգվածային հավաքույթները, կշարունակեն պահպանվել:

Ազգային կառավարությունը պարբերաբար կվերանայի մեր առաջընթացը, որպեսզի մենք կարողանանք ապահով առաջ ընթանալ:

Ավստրալիան պետք է ակնկալի հիվանդության դեպքերի թվի ավելացում կամ հնարավոր բռնկումներ, երբ սահմանափակումները թեթևանան: Այս ծրագիրը ոչ թե մինչև COVID-19-ը մեր կյանքին վերադառնալն է, այլ սովորել ապրել COVIDSafe.

Եթե յուրաքանչյուրը իր դերը կատարի, մենք կկառուցենք COVIDSafe Ավստրալիա, որտեղ պաշտպանված են և կյանքը և ապրուստը: